

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ. Խորհրդական կողման առքելութեան մասին

Ս. Սինօղի որոշումը: «Ճեն» օրաթերթը «Սիրոյ գործը» վերնագրով յօդուածում ողջունում է և Սինօղի այն որոշումը՝ որով կարգադրել է՝ որ Ռուսաց բոլոր վանքերը պէտք է թէ գործով և թէ դրամով օգնեն պատերազմում վասառած զինուորներին ու նոցա ընտանիքներին: Յօդուածագիրն ասում է. Ռուսաց եկեղեցին քրիստոնէական սիրոյ մեծ գործով ներկայումս «մեծ տօնի» սկիզբն է դնում: Սինօղի վերջին նիստերից մէկում որոշումն է եղել, որ բոլոր պրախօսաւ վանքերն ու եկեղեցական հաստատութիւնները կազմակերպեն ապաստարաններ հիւանդ և վիրաւոր զինուորների, նաև պատերազմում սպանուած զինուորների երեխաների համար ժողովուրդը վաղուց սպասում էր այդ կարգադրութեան և այդ բնական է, որովհետև ողորմածութիւնը ամենից առաջ պէտք է ժողովուրդը սպասէր վանական հաստատութիւններից, որոնց թուին է պատկանում առաջնորդական տները: Հին Ռուսաստանը պահանջ է յայտնել, որ առհասարակ վանքերի ունեցուածքը համարուի աղքատների ունեցուածք: Բայց վանքերը այդ պահանջին ընդառաջեն եկել առաւելապէս ժողովրդական մեծ աղէտների ժամանակի Ներկայ րոպէն չափազանց բացառիկ է, հետեապէս և վանքերի կարգադրութիւնը ներկայումս պէտք է լինի նոյնպէս բացառիկ: Ռուսաստանում 460 տղամարդկանց և 430 կանանց վանքեր կան՝ 80 հազար բնակչով: Համարեա իւրաքանչիւր վանք կարող է կազմակերպել ապաստանարան մեծ կամ փոքր չափով, իսկ վանքի վանականները կամ կոյսերն էլ կարող են այդ ապաստանարանի գթութեան եղբայրն կամ քոյրն լինել և կամ անտէր երեխաների դաստիարակիչն: Անշուշտ հարկաւոր է միայն ցանկութիւն, և այն ժամանակ հազարաւոր հիւանդ ու վիրաւոր զինուորներ կարող են ապաստան գտնել վանքերում: Վանական վարչութիւններին ամենից շուտ օրինակ պէտք է տան առաջնորդական տները: Թեմի եպիսկոպոսն ինքը պէտք է հանդէս գայ իրեւ նախաձեռնող բարեգործութեան: Յայտնի է ամէնքին՝ որ առաջնորդները հաւասար չափով չեն ոռճիկ ստանում, կան շատերը՝ որ աչքի ընկնող խոշոր եկամուտ ունին: Ահա այդ հարուստ առաջնորդները հնարաւորութիւն ունին բաժին հանելու իրենց միջոցներից և բարեգործութեան նախաձեռնողը լինին ներկայ կրիստիքական բոպէին: Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրայ

Աստրախանի առաջնորդը ստանում է 16 հազար, Վոլխովկինը՝ 20 հազար, Ղաղանինը՝ 18 հ., Քիշնեփինը՝ 21 հ., Կիսինը՝ 48 հ., Լիտովսկինը՝ 24 հ., Մոսկուայինը՝ 36 հ., Պետրոգրադինը՝ 28 հ., Սիմբիրսկինը՝ 15 հ., Խարկովինը՝ 18 հ., և այլն, իսկ այլ առաջնորդներ 4—5—6—7 հազար ու. Ինչու ուրեմն ներկայումս հարուստ առաջնորդները իրենց ոռնիկները չհասցնեն քիչ ստացողների սոճկին, իսկ մնացած հազարները նուիրաբերեն յօդուապատերագմից վնասուածների: Ինչու հարուստ առաջնորդները իրենց հաշուով մի մի ապաստանարան չհիմնեն և դորանով գեղեցիկ օրինակ տան վանքերին և եկեղեցական հաստատութիւններին: Վանքերը ունին 60 միլիոն դրամագլուխ, իւրաքանչիւր տարի էլ մի միլիոն էլ 0/0/0 է աւելանում և միանում դրամագլւխին: Ի նկատի առնելով այդ աշքի ընկնող միջոցները վանքերի, կարելի է բոլոր վանքերում գեղեցիկ կերպով կազմակերպել ապաստարանների հիմնարկութեան գործը: Ծուսաց եկեղեցին պէտք է այս պատմական օրերին ցոյց տայ մեծ եռանդով իւր իսկական գերը ու առաքելական գործունէութիւնը: Ծուսաց վանականութիւնը չէ կարող ունենալ աւելի քան յարմար ժամանակ, ցոյց տալու ոռու ժողովրդին իրենց կոչման արժանի քրիստոնէական ճշմարիտ ծառայութիւնը:

Աւելի քան ժամանակն է, որ բոլոր դաւանութեանց քրիստոնէական եկեղեցիներն ու վանքերը հետեւն վերոյիշեալ քրիստոնէական մեծ ու բարձր առաքելութեան:

—Յունվարի 9-ին Սինօդի նիստերը շարունակուել են: Հերթական առաջին հարցերիցն է համարւում ամուսնալուծութեան վերաբերեալ բարենորոգութիւնները, ըստ որում պէտք է խորհրդակցութեան նիւթ լինի միայն ամուսնալուծութեան դատական եղանակի նախադիմի քննութիւնը և ոչ թէ ամուսնութիւնը լուծելու առիթները, որոնց թիւը արգէն սահմանափակուած է:

—Սինօդի գլխաւոր դատախազ Սարլերը դիմել է Նախարարական Խորհրդին միջոց ստանալու պահպանել Գալիցիայի նոր պրավուլաւ եկեղեցական ծխական համայնքները: Այդ ծխական համայնքներից ներկայումս Գալիցիայում կազմակերպուած է մինչև 50: Եւլոգի եպիսկոպոսի զեկուցման համաձայն պէտք է կազմուի մինչև 100 ծխ. համայնք: Սինօդը որոշել է իւրաքանչիւր համայնքի քահանային ոռնիկ նշանակել արքունական գանձարանի հաշուով տարեկան 1200 ռ. իսկ սաղմոսասացներին 300 ռ.:

—Սինօդի ստացած տեղեկութիւններով պարզւում է՝ որ մինչև այժմ պատերագմի դաշտն են գնացել քահանայ թէ վանական մօտ 584 հոգի:

— Մի կոպէկ: Ուուս հայրենասէրների մի ընկերութիւն կազմակերպել է և պաշտօնական ընթացք տուել, որ կամաւոր կերպով իւրաքանչիւր ոք փակ և բաց նամակներին, բացի պահանջուած նամակադրումից, փակցնի նաև մի կոպէկ արժէցող «հայրենասիրական նամակադրում»: Այդ ընկերութիւնը կոչում է Կայսերական կանանց Հայրենասիրական Ընկերութիւն: Ընկերութիւնը իսկապէս հիմնուել է 100 տարի առաջ և մի կոպէկ արժեցող նամակադրումների շնորհիւ այժմ աչքի ընկնող միջոցներ ունի և պահպանում է իւր հաշուով ապաստարաններ և այլ կրթական հաստատութիւններ: Հայրենասիրական նամակադրումների վաճառումն եղել է Ռուս-Ճապոնական պատերազմի ընթացքում: Այն ժամանակ իւրաքանչիւրը արժէր 3 կոպէկ: Հայրենասիրական նամակադրումների վաճառումն այժմ մեծ յաջողութեամբ է առաջ գնում: Այդ ժողովուած կոպէկներով Ընկերութիւնը հնարաւորութիւն է ունենում շատ արցունքներ սրբել, շատ որբեր տեղաւորել և կրթել նրանց:

Ա. Ն. Գ. Լ. Ի. Կ. Ա. Ն Ե Կ Ե Պ Ե Ց Բ

Պատերազմն եւ Ամերիկակ ան բարեգործութիւնը: Ամերիկացի միլիոնատէրերի բարեգործութիւնը յայտնի է ամբողջ աշխարհին: Նոքա չափազանց մեծ առատութեամբ են բարեգործութիւն անում և նոցա արածները լինում են ճիշտ ըստ Աւետարանի, որ «Ճախ Ճեռքը չպէտք է իմանայ այն, ինչ որ կատարում է աջը»: Ամերիկայի քաղաքների զարդ կազմող գրադարանները, համալսարանները, հիւանդանոցները և այլ կարևոր հաստատութիւններ շինուած են Ամերիկայի յայտնի բարեգործների նուէրներով: Զարմանալի մրցութիւն է լինում այդ հարուստ բարեգործների մէջ: Իւրաքանչիւրը աշխատում է գերազանցել իւր բարեգործութեամբ միւններին: Երանի թէ այդ նախանձելի մրցութիւնը համեմատաբար լինէր և մեր հայ հարուստների մէջ: Եթէ պատահել է սով Ռուսաստանում, հեղեղ Զինաստանում, երկրաշարժ Արևելեան Հոգկաստանում կամ ժանտախտ Արևմտեան Հոգկաստանում, այլ և այլ աղէտներ զանազան երկրներում՝ անպայման Ամերիկացի բարեգործների սրտում արձագանք են գտել այդ երկրների կոչերը և նորք իրենց առատ նուիրաբերութիւններով օգնութեան են հասել զանազան թշուառ աղքերի: Զարմանալին այն է՝ որ ոչ թէ թշուառներին օգնութեան են հասել Ամերիկայի հարուստներն իւրենց միլիոններով, այլ նոյն իսկ Ամերիկայի ժողովրդի աշխատող դասակարգն անգամ հանդէս է եկել իրեն «աշխատանաց օգնութեամբ»:

Եւ այժմ, երբ Եւրոպական պատերազմն Եւրոպայում և այլուր առաջ է բերել կարիքների ծով, Ամերիկայի միլիոնատէրերը կրկին հանդէս են եկել իրենց լայն մարդասիրական օգնութեամբ։ Այդ նպատակով արդէն Ամերիկայում հիմնել են զանազան և բազմաթիւ ֆօնդեր։ «New York Times» ամբողջ երեսներ է նուիրում այդ ֆօնդերի հաշուեաւութեան։ Նուէրների մեծագոյն մասը յատկացնում են թշուառացած, բայց հերօս Բելգիական ժողովրդին։ Բելգիայի ժողովրդին հասած աղէտները գերմանացիների կողմից Ամերիկայում առաջ է բերել խոր վշտակցութիւն և համակրութեան բուռն զգացմունք դէպի այդ հերոս ժողովուրդը։ Ամերիկայի բարեգործ միլիոնատէրերը կարծ միջոցում Բելգիացիներին օգնելու համար ոչ միայն նուիրաբերել են միլիոններ և ժողովել ուտելիքի պաշար, տաք հագուստ, այլ և լուրջ կերպով մտածում են Բելգիայի պատերազմական 90,000,000 դոլար^{*)} տուգանքը վճարել։ Ամեն մի Ամերիկացի զարմանալի ինքնազիտակցութեամբ աշխատում է իւր ունեցածից բաժին հանել այդ նպատակով կազմած ֆօնդին։ Նիւ-Իօրկի «Belgian Relief Committee» ընկերութիւնը արդէն յօգուտ Բելգիայի ժողովել է 600—700 հազար դոլար և իւրաքանչիւր օր էլ ստանում է մինչև 20,000 դոլար։ Բելգիացիներին ընական բերքերով օգնութեան հասնող ընկերութիւններ կան Ամերիկայում 1000-ից աւելի։ Յայտնի «Rockefeller Foundation» բարեգործական նպատակով կազմուած ֆօնդը այժմ միջոց ունի 103,930.817 դոլար, իսկ իւրաքանչիւր տարի մուտք ունի 5,500,000 դոլար։ Այս ընկերութիւնը Բելգիա է ուղարկել մեծ քանակութեամբ ալիւր, բրինձ և լոբի։ Այդ ընկերութիւնը արդէն Բելգիայի համար ծախսել է մինչև այժմ մօտ կէս միլիոն դոլար և առանձին յանձնաժողով է ուղարկել Բելգիա՝ նոցա կարիքի մօտաւոր չափը իմանալու։

Արեւելեան թատերաբեմում վնասուած հրէաների համար եղել է ժողովարարութիւն և մինչև այժմ զոյացել է 350,000 դոլար։ Ծննդեան տօներին Ամերիկայից յատուկ շոգենաւ են ուղարկել Բելգիա բժիշկներով և զթութիւն քոյրերով, այլ և մեծ քանակութեամբ խաղալիքներ Բելգիայի երեխաների համար։ Մի խօսքով Ամերիկայի ժողովրդի կողմից, յօգուտ պատերազմից վնասուած ազգին, նուէրների գումարը տասնեակ միլիոնից անցնում է։ Զպէտք է մոռանանք յիշատակելու, որ Ամերիկայի ժողովրդի կողմից այս նուիրատութիւնները լինուեմ են մի այնպիսի ժամանակ, երբ ինքը ժողովուրդը մեծ նեղութեան մէջ է ոչ միայն անցեալ տարուայ երկրի անբերբիութեան պատճառով, այլ և երկրի արդիւնաբերութեան ու բանւորական մասի տնտեսութեան համաշխարհային պատերազմի հասցըած ծանր հարուածներին

^{*)} Մի ամերիկան դոլարը համար է սուսպան մօտ 2 ռուբլ լուն։